

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Հողային ապահովութիւն. — Երբեք չենք տեսնում, որ Թիֆլիսի քաղաքային բուժարանի ֆարմացիաները խնայող չեն. Ազատներ փողեր են, Թատրոն և Երաժշտութիւն. Նամակ Բաթումից. Նամակ Կապանի գաւառից. Երբեք չեն լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նակալ Պարսկաստանից. — ՀԵՐԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՀՈՂԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

Այն ներկայացուցիչները թուում, որոնք հաւաքվել էին Թիֆլիսում — խորհրդակցելու երկրի կարգերի մասին, կային գիւղական համայնքների կողմից ընտրվածներ: Գիւղական ներկայացուցիչները, բնականաբար, առանձին ուշադրութիւն էին դարձնում հողային հարցերի վրա և ցանկանում էին, որ էական միջոցներ մշակված լինեն գիւղացիների վիճակի բարելավման համար:

Նրանք, ի միջի այլոց, մեծ նշանակութիւն էին տալիս այն դեռ ևս ազատ արքունական հողերին, որոնցով կարելի էր լինէր մեղմացնել սակաւահողութեան սուր արտայայտութիւնները, եթէ այդ հողերը նպատակայարմար կերպով արվէին գիւղացիներին շահագործելու համար:

Արքունական ազատ հողերի մի նշանաւոր մասը գտնվում է այնպիսի ընդարձակ տարածքներում, ինչպէս են օրինակ Մուղանի, Միլի, Մարգարապատի և ուրիշ նոյնատեսակ անապատները: Այդ տարածութիւնները կարող են բազմաթիւ գիւղեր հիմնելու նպատակին ծառայել, եթէ միայն նրանք նախօրէ ջրվէն և այդպիսով պատրաստվեն երկրագործական աշխատանքի գործադրութեան համար: Դա մեծ գործ է, լուրջ ձեռնարկութեան կարօտ: Իսկ խոշոր ծրագրի իրագործելու համար կարևոր է, թէ բաւականաչափ գումար ունենալ և թէ նախաձեռնողներ հանդէս բերել: Անկասկած՝ ոռոգման գործին կարող էր մեծապէս նպաստել պետութիւնը և պետական միջոցներով: Բայց յայտնի չէ, որ միայն պետական գանձարանի վրա, մասնաւորապէս, երբ թէ պատերազմը և թէ ներքին բազմաթիւ կարիքները չարազանց մեծ ծախքեր են պահանջում, խնայելու և նպատակայարմար չէ: Անհրաժեշտ է, որ և ազգաբնակչութիւնը ինքը կարողանայ դրամագլուխներ ստեղծել հաւաքական ոյժերով և ինքնագործութեամբ առաջ տանել գործը:

Մենք հաւատարմաբար ենք, որ եթէ բաւականաչափ արդարութիւն տրված լինի այդ նպատակով ընկերութիւնների կազմելու և խրախուսված լինեն գործի նախաձեռնողները, կը գտնվեն գումարներ ոռոգման և գիւղեր հաստատելու գործը աջակցելու համար: Եթէ տեղական ազգաբնակչութեանը թոյլ տրվէր, որ օրինակ Թաթարու գետի շրջանում կամ Մարգարապատի դաշտում կազմվէին գիւղեր, դժուար չէր լինի Թաթարու և Ախուրեան գետերից ջուր վերցնել ոռոգման մի ընդարձակ սխաւովով ջուր հասցնելու այժմեան ամայի տեղերի հեռաւոր ծայրերին:

Իսկ ներկայումս տեղական նախաձեռնութիւնը, որ առանց այն էլ թոյլ է եղել շնորհիւ մեր դարաւոր անցեալի, աւելի ևս ճնշված է այն պատճառով, որ նա ոչ միայն խրախուս ու քաջակերպութիւն չէ գտնում, այլ և այն որ անպիտանութիւն և բազմաթիւ ձեռնարկներով, ձգձգումներով և անհասկանալի նկատումներով:

Արքունական ազատ հողեր կան բաւական մեծ քանակութեամբ նաև արտաքին և անտառները շրջաններում: Նրանց մի մասը բարեկարգութեան տակ է ընկել,

բայց կան և այնպիսիներ, որոնք սպասում են իրանց հերթին: Այժմ, երբ գիւղական սակաւահողութեան և առհասարակ ժողովրդական բարօրութեան հարցերը առանձին նշանակութիւն են ստացել, անշուշտ, ցանկալի է, որ հողային ապահովութեան ծրագրերը առաջ մղվէին առանձին եռանդով և արագ լուծուած ստանային:

ՆԵՐՔԻՆ, ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՈՒԺԱՐԱՆԻ ՖԱՐՄԱՑԻԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏԱՐԻ

Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը ունի կենտրոնական բուժարան իր մի քանի բաժանմունքներով, որոնց մէջ ծառայող ֆարմացիները անցեալները միաձայն մի խնդիրով դիմել են սահմանափակ բժշկական տեսուչ Բ. Գ. Ստեփանեանին, որ նա միջնորդէ դուրսի առաջ աւելացնելու ուժերին և կարգաւորէ պարագայները ժամերը սյն չսփռել, ինչ չսփռել որ ներկայումս գոյութիւն ունեն քաղաքիս մասնաւոր դեղատներում: Բանից երևում է, որ քաղաքային ֆարմացիները, գործելով մի քանի անգամ աւելի միւս մասնաւոր պարագայներին, ստանում են վերջիններից աւելի քիչ օգուտ:

Տարիներ ընթացքում ծառայել են մի և նոյն ուժերով, մինչդեռ գործը զբաղակալ աւելացել է երկու անգամ: Իրեն ապացոյց իրանց ասածներին, նրանք ներկայացնում են իրանց խնդիրները բոլոր թւերը, սկսած 1900—1904 թ., որոնցից պարզ երևում է, որ 1900 թ.ին հիւանդանոցները յաճախող 85,755 հոգի հիւանդների թիւը 1904 թ.ին վերջին բարձրացել է 147,947-ի, իսկ 1903 թ.ին մինչև անգամ եղել են 221,846 հոգի: Բերած թւերը պարզ ապացոյց են այն բանի, որ քաղաքային ֆարմացիները տարիներ ընթացքում գործել են երկու մարդու չափ, մի հանգամանք, որը ծառայել է ի վնաս նրանց առողջութեան, սակայն ոչ իրանց նիւթական բարոյութեան օգտին:

Բժիշկ Ստեփանեանը, ստանալով ֆարմացիներին խնդիրը, իր կողմից դիմում է քաղաքիս բոլոր մասնաւոր դեղատներին, խնդրելով յայտնել իրան 1) թէ քան են ստանում իրանց մօտ ֆարմացիները և 2) քանի ժամ են պարագայում:

Սակայն վերոյիշեալ հարցերի պատասխաններով դժուար թէ կարելի լինի հարցը օրինաւոր կերպով լուծել, եթէ միայն աչքի առաջ չունենանք հետեւեալ հանգամանքները: 1) մինչդեռ մասնաւոր դեղատներում ֆարմացիները օրվայ ընթացքում փոխվում են երկու անգամ, քաղաքային բուժարաններում այդ բանը չէ կայ. ֆարմացիները առաւօտեան 9 ժամին մտնում են պաշտօնները և հեռանում 3—4 ժամին և 2) մասնաւոր դեղատներում գործը կատարվում է պարբերաբար, նայած էր են դեղատոմսեր բերվում, մինչդեռ քաղաքային բուժարաններում դեղատոմսեր թիւը չէ կտրվում մինչև ընդունելութեան ժամերի վերջնաւոր: Եւ այդպէս, մինչդեռ առաջինները իրանց գործը կատարում են հանգստանալով, երկրորդները, ընդհակառակը, կատարում են շարունակ լարված կերպով: Այսպիսի հանգամանքներում ինձ թուում է, որ վերջիններիս ուժերին եթէ ոչ աւելի, գոնէ պիտի առաջիններիս ստացածներին հաւասար լինէին, մինչդեռ ներկայումս դրա հակառակն է նկատվում: Եւ սա շատ անարդար բան է քաղաքային ինքնավարութեան կողմից, ուստի շատ իրաւացի պիտի համարել ֆարմացիներին պահանջները:

Բժիշկ Ստեփանեանը, ստանալով մասնաւոր դեղատներից պատասխանները, ժողով է կազմում, որը սակայն վերջնական եզրակացութեան չէ գալով, ընտրում է իր միջից մի յանձնաժողով, որին և յանձնվում երկու շաբաթվայ ընթացքում մշակել այդ հարցերը և յայտ-

նել իր կարծիքը այդ խնդրի վերաբերմամբ: Երբ յանձնաժողովի անդամներն են՝ բժիշկներ Ի. Գրիգորեան և Շահվերդեան և քաղաքային բարձրագործի ջիւղիկոս Ալեքեանը: Անշուշտ յանձնաժողովի անդամները, ի նկատի ունենալով վերոյիշեալ հանգամանքները, որոնց մէջ գործում են իրանց և ուրիշ ֆարմացիները և այն, որ իրանք ի մօտոյ ծանօթ են քաղաքային ֆարմացիներին գործունէութեան հետ, կը ասեն իրանց արդար վճիռը այդ խնդրի վերաբերմամբ:

Մենք կարծում ենք, որ այն քաղաքային վարչութիւնը, որը ինքն էր միջամտում ուրիշ ծառայողներին իրաւունքները պաշտպանելուն, չի զրանայ լուրջ ուշադրութիւն դարձնելու իր ծառայողներին խնդիրները, և կաշխատէ նրանց պահանջներին բաւարարութիւն տալ: Ներկայ քաղաքային վերաբերման միանգամայն բռնած համակրելի դերը դէպի ներդրածները և բժ. Ստեփանեանից ուշադիր վերաբերմունքը դէպի իր ստորադասներին կարիքները, մեզ իրաւունք են տալիս կարծելու, որ ֆարմացիներին խնդիրը զբաղակալ կերպով կը վճարի և այն էլ մօտ ապագայում:

Համակարգ

ԱՂԱՏՆԵՐ ՓՈՔՐԻՐԻՆ

Մեր գործակատները վաղուց զգում էին իրանց դրութիւնը, զգում էին, որ ճնշված են, սակայն չէր գիտէին ինչպէս անէին, որ իրանց արդարացի պահանջներին բաւարարութիւն տային այն խաղէկները, որոնք գիտեն միայն հարստահարել, մրցել և ապա նետել փողոց:

Սակայն իրաւունք ունենք մեղադրելու մեր վաճառականներին, ինչպէս և այն վաճառականներին, որոնք իրանց տգիտութեան պատճառով գործադուր անողներին մկրտում են «ԾՄԻՆՈՎՈՐ» անունով:

Մենք գրինք մի շարք պահանջներ և ստացանք բաւարարութիւն:

Շատ բարի. մեր բոլոր պահանջները կատարել, այսինքն ոչ թէ կատարել, այլ կատարել տուեց գործադուր և ընդհանուր ոյժը. սակայն մեր դրութիւնը փոխվեց:

Բոլորովին ոչ:

Չը պէտք է մոռանալ, որ մեր վաճառականներին մեծամասնութիւնը տգէտ է և ողորմաբար, չը պէտք է մոռանալ, որ անողը ճակատագրորէ հէնց փողը հասակից նետել է նրանց խանութ, որ սովամահ չը լինեն և խանութում «կուշտ» հաց ուտեն: Երկար տարիներ մնալով խանութում և սովորելով վաճառականութիւն, մեծամասնութեանը աշխատելու է ապագայում «խաղէկ» դառնալ, և այսօր մեր առաջ կանգնած վաճառականների լէզեօնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ նախկին «աշխատանք»:

Ուրեմն եթէ մենք ուզում ենք խկապէս բարեկալ մեր դրութիւնը, պարտաւոր ենք ուշադրութիւն դարձնել այն փողերի աշխատանքին, որոնք խանութներում կատարում են ամենամանր աշխատանքները, որոնք աւելում են խանութները, սրբում են փողին, խաղէկին տնից կերակուր են բերում:

Չէ որ այժմեան «աշխատանքներ» դառնալու են ապագայում խաղէկներ:

Ի՞նչ իրաւունք ունենք պահանջներ դնել այն աշխատանքի առաջ, որը մեծացել է խանութում և փողոցում:

Մեր դրութիւնը բարեբեկու համար հարկաւոր չէ բռնի միջոցներով դիմել—պահանջներ դնելով ազէտ և ողորմելի մարդկանց առաջ, այլ հարկաւոր է լոյս, հարկաւոր է կրթութիւն, հարկաւոր է գիտութիւն, որ գիտութեան շնորհիւ մեր ապագայ վաճառականները կարողանան մրցել և ոչ թէ հարստահարել. վաճառականը կեղծում է, զրկում է ծառայողին, որովհետեւ տգէտ է, հարստահարում է, որովհետեւ ինքը փողը հասակից

մեծացել է խանութում, և անում է այն, ինչ որ արել են իր խաղէկները:

Գործակատներին ընկերութիւնը արդէն ստացել է թոյլտուութիւն ուսումնարան բանալու. արդեօք լաւ չի լինի, որ մեր վաճառականները փողերի աշխատանքին օրական 3 ժամ ազատ թողնեն, որ նրանք յաճախեն ուսումնարան: Արդեօք նպատակայարմար չի լինի գործակատներին ընկերութեան ուսումնարանը առանձնապէս յատկացնել այն փողերին, որոնք մի կտոր հացի համար ամբողջ օրը մնում են բանտարկված խանութում, շատերը նոյն խի առանց վարձի, լսելով միմիայն հայհոյանք և լպիւր սրախօսութիւններ:

Ազատներ փողերին դժուար խաւարից, որ մենք ապագայում ունենանք ոչ թէ ազէտ, ողորմելի և հարստահարող «շաղկներ», այլ ժամանակի պահանջներին յարմարվող, մրցելու ընդունակ վաճառականներ:

Թիֆլիսի գործակատներին ընկերութեան անդամ

Գ. Անանեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Բարձր «Վարպետ» կամ «Անտուր մարզ» պիեսի ներկայացումը տիկ. Նավոյկու մասնակցութեամբ)

Ուրբաթ, ապրիլի 22-ին, Նավոյկու խումբը խաղաց մի նոր պիես՝ Բարձր «Վարպետ» պիեսը երեք գործողութեամբ:

Պիեսը հետաքրքրական է և օժտված ինքնուրույն առանձնատիպով խնդիրներով: Նրա մէջ հանդիս են բերված ուժեղ ընտանոթեան, անհատական ազատութեան և սիրոյ գաղափարներ ընդհանրաւոր մի քանի ընտրող պատկերներ: Պիեսի գլխաւոր հերոս զօկտոր Դոր ուժեղ և անկախ ընտանոթեան տէր մի անձն է, բայց նա չափազանց սիրում է ենթարկել ուրիշներին իր սեփական թիւադրութիւններին և սոյն պատճառով վերջի վերջոյ նա յետ է մղում իր շրջապատողներին և իրապէս կորցնում իր հեղինակութիւնը նրանց առաջ: Դոկտոր Դորի դերում շատ բնորոշ էր դերասան Դորի, որի խաղը տիպիկական էր և ամբողջացած: Դորի կնոջ դերը կատարում էր տիկին Նավոյկայան, որը այդտեղ մեծ նիւթ չուէր իր տաղանդը ցոյց տալու համար: Հետաքրքրական անձնատիպներ էր սխմել ուսանող զօկտոր Կոկորո, որի դերը կատարեց դերասան Դաւիթբաթով հմուտ և խելացի կերպով: Առ հասարակ անսամբը շատ գոհացուցիչ էր և պիեսը մեծ հաւանութիւն գտաւ հանդիսականների կողմից:

Սիրող

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Մարտի 30-ին

Մարտի 27-ին, տեղիս հայոց եկեղեցում տեղի ունեցաւ ծխականների երկրորդ ժողով (առաջինը չը կայացաւ անդամների բնութեան պատճառով), որին ներկայ էր բաւական մեծ քանակութիւն: Հերթական հարցերը բաւական հետաքրքրութիւն առաջացրին դէպի մոռացութեան տրված մեր եկեղեցական խնդիրները, իսկ նրանցից վերջինը երկար և տաք վիճաբանութեան առիթ տուեց: Նրանք էին—1) Ընտրել մի մասնաժողով՝ երեքփոխի հաշիւները վերապահելու համար, — ընտրվեցան պ. պ. Կար. Նաչատրեանց, Ար. Մակարեանց և Նիկ. Չաբաբեանց: 2) Կ. քահ. Մալխասեանցին իր քաջածիւսութիւնների և այլ ծախսերի համար նպաստ տալ, — միաձայն որոշվում է վճարել 200 ռուբլի: 3) Տիրացուներին ուժեղ աւելացնել, — վճարվում է միաձայն աւելացնել, միայն թէ չափը որոշել հաշիւները ընկերուց յետոյ: 4) Գաղթական քահանայիս նոյնպէս նպաստ տալ, — որոշվում է տալ 100 ռուբլի: 5) Գերեզմանափորներին, որ մինչև այժմ առանց ուժիկի էին և միայն 2 ռուբլի մեծերի և 1 ռուբլի փոքրերի համար դերեզման

փորձելու վարձ էին ստանում, որոշվեց վճարել նաև ամսական 5-ական բուրձի ռոճիկ: 6) Մեկնանց քանանայի մօտ 1 1/2 տարի բացակայության հարցը, որին, համաձայն այստեղ սահմանված կարգերին, շարունակվում է վճարվել իր տարեկան 2000 բուրձի ռոճիկը:

Որքան է ներկայ պայմաններում ձանձրացուցիչ և անյարմար լինե՞ր մասնաւոր հարցերով, կամ այսպէս ասած, մեր հին ցաւերով զբաղվելը, բայց և այնպէս քանի որ Մեկնանց քանանայի անուան հետ կապված է նաև Բաթումի հայ հասարակութեան կողմից տարեկան 2,000 բուրձի վճարելու պարտաւորութիւնը, այդ պատճառով, խնդրել աւելի պարզաբանելու համար, եթէ անհրաժեշտ կը լինի, մենք կաշխատենք աւելի երկարօրէն զբիւ մի այլ անգամ, առայժմ միայն այսքանը ասելով, որ, ինչպէս վերեւ էլ ասացինք, երկար ու տաք վիճաբանութիւններից յետոյ, ժողովը որոշեց, հեռագրով փոխադրել Պարիզ Մեկնանց քանանային 150 բուրձի ձանապարհածախս և առաջարկել նրան, որ եթէ յընթաց 15 օրվայ չի գայ Բաթում, Բաթումի հասարակութիւնը իրան ազատ է համարում թէ նրան ռոճիկ վճարելու և թէ Բաթումի վրա նրան քանանայ ձանաչելու պարտաւորութիւնից և մի և նոյն ժամանակ իրաւունք է համարում իր համար մի նոր քանանայ հրաւիրել: Այդ հեռագրի բովանդակութիւնից ընթերցողը պարզ կարող է եղբակցանել, թէ մինչև որ աստիճան լցված է եղել ժողովուրդի համբերութեան բաժակը:

Ինչպէս արդէն որոշված էր, հէնց ժողովի միւս առաւօտ փողը փոխադրվեց Պարիզ և պատասխան ստացվեց Մեկնանց քանանայից, որ արդէն ձանապարհ է ընկել դէպի Բաթում: Գ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ՂԱԶԱՍԻ ԳԱԻԱՌԻՑ

Բաղանիս, ապրիլի 18-ին
Ղազարի գաւառում խաչարածութեամբ պարագոյններին մեծ ֆառ հասցրեց «Նիշխան» կոչված ոչխարի հիւանդութիւնը, բացառութեամբ մի քանի գիւղերի: Թշուառ է գիւղացին, խղճալի դուրսեան մէջ է, ոչխարը կոտորվեց, հաց չունի, թաղարի գինը հասել է 12 ր., չունի դարման, խոտ, վերջինի սալը, որ առաջ ծախվում էր 3 ր., այժմ ծախվում է 10 ր.: Այսփի պակասութիւնը գիւղացիների համար անելի զգալի է ծանր է, քան հացինը: Յիշեալ պակասութիւնները գիւղացիներին յուսահատութեան այն աստիճանին են հասցրել, որ անձնասպանութեան մի քանի դէպքեր են պատահել:

Ինչ է պատճառը, որ Ղազարը ամենահարուստ գաւառը լինելով՝ հողը բերրի, ունի գետեր, բազմաթիւ գետակներ, ընդարձակ արօտալանդիւններ, կոյս անտառներ, սառն աղբիւրներ, առողջարար օդ, նոյն իսկ հանքեր— բնակիչներն այսպէս աղքատ են: Ուսումնասիրելով գիւղական կեանքը՝ մարդ գալիս է այն եղբակցութեան, որ գիւղացիների դժբախտութեան գլխաւոր պատճառը կայանում է նրանում, որ չունեն բարիխիղճ, կրթված առաջնորդներ: Գիւղացիները կարծում էին, որ ռոճկով տանուտէրները կը լինեն իրանց համար օգտակար, բայց փորձը ցոյց տուեց, որ ոչ միայն օգտակար չին, այլ նոյն իսկ մի աւելորդ բեռն են, որից ստիպված մտադիր են դիմելու պ. գաւառապետին, որ տանուտէրները լինեն առաջվայ նման առանց ռոճիկի:

Գիւղերում գործելու մեծ ասպարէզ ունեն քանանները, որոնք դժբախտաբար, իրանց մտաւոր կարողութեամբ ոչնչով չեն տարբերվում աղէտ գիւղացիներից: սրանք կարծում են, որ քանանայի պարտաւորութիւնն է՝ պակակել, մկրտել, թաղել և տոկոսով փող տալ: այս է գիւղական քանանայի կեանքի դէպքը: Կոյրին կոյրը չէ կարող առաջնորդ լինել: Գաւառներն ունեն բաւականին կրթված երիտասարդներ քաղաքում ցրված. ժամանակ է, որ այդ պարոնները մտածեն իրանց ծննդավայրերի մասին: Կրթված երիտասարդների բացակայութիւնն է պատճառը, որ ամբողջ գաւառի, որքան ինձ է յայտնի, ոչ մի գիւղում ոչ գիւղական բանկ կայ և ոչ էլ ամբար, որի համար էլ տաս բուրձուն վերցնում են ամսական 50 կ. տոկոս, իսկ մէկ կարողար ցորենին—մի թաղար ցորեն տոկոս: Ահա ինչ է գիւղացուն աղքատացնում, յուսահատեցնում:

Միլիտանդէկ քանանայ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, ապրիլի 23-ին Նորին Կայսերական Մեծութեան Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնայի անուանակոչութեան տօնը լինելով, Թիֆլիսը զարդարված էր դրօշակներով: Առաւօտեան ժամը 10-ից սկսվեց Ալեքսանդրոսենկի զինուորական տաճարում պատարագը, որից յետոյ գոհաբանական մաղթանք կատարվեց, իսկ այդ ժամանակ արարելից հնչեց Թիֆլիսի 21 հարուածը: Գոհաբանական մաղթանքների կատարվելուն հայոց Վանքի մայր տաճարում և միւս գաւառներում աղօթեցողները: Երեկոյան քաղաքը հրավառված էր:

Թիֆլիսի դուժայի կողմից Պետերբուրգ գնացած պատերազմները վերադարձել են. նրանք հաղորդում են, որ Կովկասի փոխարքան իրանց հետ ունեցած խօսակցութեան մէջ յայտնեց, թէ Թիֆլիս գալուց յետոյ անմիջապէս հրաւիրելու է ազնուականութեան, քաղաքների և գիւղացիների ներկայացուցիչներին, որպէս զի նրանց միջոցով պարզէ տեղական կարիքները: Եւ այժմ այդ պէսեքի մասին, դուժայի յանձնարարութիւնով, քաղաքագլխի կազմած զեկուցումը ըննելու համար ընտրված է յատուկ յանձնաժողով հետեւել ձայնաւորներից Ն. Ն. Օստրոգորսկի, իշխան Ա. Մ. Արդու-թեան-Երկայնաբազուկ, իշխան Վ. Ս. Միքէլ-լաճէ, Ա. Ս. Բաբով, իշխան Ի. Ա. Բաբաթով, Ի. Մ. Դոլուխանեան, Ս. Ֆ. Զրեւաձի և Մ. Ս Վեսելովզով:

Ապրիլի 21-ին Պետերբուրգից վերադարձած պատգամաւորները դուժայի ձայնաւորներից մասնաւոր ժողով կազմեցին և բերանացի զեկուցում արին իրանց տեսած ու լսածի մասին մայրաքաղաքում: Նըրանք պատմեցին իրանց այցելութեան մասին ներքին գործերի մինիստր Բուլիգինին և Կովկասի փոխարքային: Բերանացի զեկուցումից յետոյ երկար վիճաբանութիւններ տեղի ունեցան, թէ ինչ ձևով պաշտօնական գրաւոր զեկուցում արվի դուժային:

Մի հայ ուսանողուհի, որ Պետերբուրգի բնագիտական բարձր կուրսերում լսում է դասախօսութիւններ, ստիպված է ընդհատել իր պարապմունքները ներթափան միջոցների պակասութեան պատճառով: Այդ ուսանողուհին մեր նշանաւոր Վիպաւան Սաչաւուր Արուստիանի թոռն է: Նա յոյրը դրել է հայ հասարակութեան վրա և հաւատացած է, որ կը գտնվին բարեբախներ, որոնք կարողութիւն կը տան նրան շարունակելու և աւարտելու իր սկսած ուսումը: Այժմ, երբ ընդարձակվում է գործելու ասպարէզը մեր երկրում, աշուշտ կրթված հայուհիների համար շատ կը գտնվին ձեռք գործնականապէս օգտաւէտ լինելու երկրին իրանց կրթութեամբ: Օրիորդին օգնել ցանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրութեան:

Ստացանք հետեւեալ նոր գրքերը, 1) Լ. Ն. Տօրաոյ—«Որտեղ կայ սէր, այնտեղ է և Աստուած», Թարգմանութիւն Միսաբեգ Մարտիրոսեանի, տպված Ալեքսանդրապոլում, 23 փոքրագիր երես, գինը 5 կ., 2) Վիկտոր Հիւգօյ—«Եղբայրը եղբօր դէմ», երկրորդ հրատարակութիւն, տպագրված Թիֆլիսում, 48 փոքրագիր երես, գինը 10 կօպէկ:

Ապրիլի 22-ին 12 օրվայ դորժագուլից յետոյ՝ վերջապէս ծառաները վերսկսեցին նորից իրանց աշխատանքները: Հիւրանոցների և բէստօրանների ծառայողների գլխաւոր պահանջները—ամսական աւուուաղը 15 ր. վճար, օրական 8 ժամ աշխատանք, հիւանդութեան դէպքում չը գրելի ռոճիկ և պաշտօնից արձակելիս աւուուաղը 2 շաբաթ առաջ իմաց տալ—այդ պահանջներն ընդունվի են գործատէրերից: Իսկ տան ծառաների հասարակական պայմաններն այնքան բազմապատկառ են և միօրինակութեան չենթարկվող, որ ամենին չէ կարելի ասել, թէ այդ գործադուրը որ և է արդիւնք տուեց թէ ոչ:

Աղղամից հեռագրում են «Ի. Օ.» լրագրին ապրիլի 22-ին. «Պրիստաւ Երարախանը ձերբակալել է տաժանակիր աշխատանքներից փախած Հասան-բէկ-Բէրբալայ-Փաշա-բէկ-օղլուն»:—Արդեօք իրան կը պակասէր աւագականութիւնը Կովկասից, եթէ տեղական տարրերից նշանակվէին երկրի պաշտօնեաները:

Գ. Գ. Միբանօվը դիմել է մամուլի գործերի գլխաւոր վարչութեան և Թոյլուութիւն խնդրել, որ իրան իրաւունք տրվի Թիֆլիսում հրատարակելու մի ամենօրեայ վրացերէն, ցեղագրայի ենթակայ լրագիր «Ախալի Դրօշ» (Նոր ժամանակ) անունով, տարեկան բաժանորդագինը 3 բուրձի:

Վերջին ժամանակներս հասարակութեան մէջ շատ տարածված էին այն նամակի պատճենները, որ Բագուի նախկին քաղաքագլուխ Ա. Ի. Նօվիկովը ուղղել է Բագուի նախագահին իշխան Նակաշիճէին, մեղադրելով նրան և Բագուի ոստիկանապետին փետրվարի 6—9-ի կոտորածների համար: Այժմ «Бакин. Извѣс.» լրագիրը հաղորդում է, որ իշ. Նակաշիճէ և ոստիկանապետը գանգատ են ներկայացրել դատարանին, մեղադրելով պ. Նօվիկովին զրպարտութեան համար: Գործը պ. Նօվիկովի կողմից կը պաշտպանէ Պետերբուրգի յայտնի երդուեալ հաւատարմատար Կարաբէնկովի, որ կը գայ Բագու դատի ժամանակից մի քանի օր առաջ գործը մանրամասն ուսումնասիրելու համար:

Նոյն լրագիրը լսել է որ շատ բազմաթիւներ, որոնք ամառանոցներ էին վարձել Կիսլօվօդսկում, Եսենտուկում և Պետադորսկում, այժմ հրաժարվում են գնալ այնտեղ, իսկ շատերը, որոնք թէ և չէին վարձել ամառանոցներ, բայց վճել էին գնալ ամառը այնտեղ բժշկվելու, փոխել են իրանց դիտաւորութիւնը: Պատճառը այն է, որ, ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին, Կիսլօվօդսկում մի ինչ—որ տիկին Զիօ պրօպազանդա էր անում, որ ամբողջ ջարդէ ինտելիգենտներին և հայերին: Հասկանալի որ մի թիթեամիտ կնոջ խօսքերի պատճառով ամառանոցատէրերը այս տարի զնաններ պիտի կրեն:

Թիֆլիսի քաղաքային առաջին ապաստարանի կառավարչի զեկուցումից երևում է, որ ապաստարանում մարտ ամսվայ ընթացքում գիշերել են 4027 հոգի՝ 3772 տղամարդ 255 կին. ըստ ազգութեան՝ ռուսներ եղել են 1947 տղամարդ և 172 կին, հայեր՝ 1191 տղամարդ և 42 կին, վրացի՝ 390 տղամարդ և 31 կին, թուրքեր՝ 16 տղամարդ, գերմանացի՝ 54 տղամարդ, լեհեր՝ 116 տղամարդ զանազան ազգութիւնների 58 տղամարդ: Ամենից շատ յաճախել են մշակներ 1770 հոգի, յետոյ ծառաներ՝ 551 հոգի, ապա գործելու անընդունակներ՝ 465 հոգի և այլն: Ապաստարանում են գիշերել և 2 աշակերտներ:

Կովկասեան դպրոցական շրջանի հոգաբարձութիւնը, աչքի առաջ ունենալով, որ շուտով տարեքի հետ միասին կարող է և առաջ գալ խորհրդի վտանգը, հրամանագրել է իր իրաւասութեան տակ գտնված դպրոցների տեսուչներին անյապաղ բացատրել մանրամասնօրէն բոլոր բարձր դասարանների սաներին, թէ ինչ է խօրհրան, ինչպէս է նա տարածվում և ինչպէս պէտք է նրա դէմ կռուել:

Երէկ պատահաբար սխալ էր սպրդել «Մշակի» ներքին լուրերի բաժնում: Հաղորդված էր, որ Կովկասի փոխարքայի օգնական Սուլթան-Կրիմ-Գրիէյը ժամանել է Թիֆլիս. բայց դա թիւրիմացութեան արդիւնք էր: Փոխարքայի օգնականը դեռ չէ ժամանել և դեռ ևս նրա գալու մասին որոշ տեղեկութիւններ չը կան:

«Варж. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ մտադրութիւն կայ շուտով վճել կին-բժիշկներին Թոյլաւորել բժշկական-դատաստանական գործին մասնակցել: Պետական խորհրդին ներկայացված է դեռ արդարադատութեան մինիստր Մուրավիովի ծրագրին այդ հարցի վերաբերութեամբ, որի հիման վրա կին բժիշկները կարող են ձեռնհաս համարվել դատական բժշկական գործում կանանց և երեխաների վերաբերմամբ:

ԴիւիճԱՆԻՑ մեզ գրում են. «Այս Զատիկ երկուշաբթի օրը Դիւիճանի վերաբնակիչ Թուրքերը մի անգամ ևս ուղեցին ապացուցանել, թէ նրանք ամեն կողմով սերտ բարեկամական յարաբերութեան մէջ են եղել և կը լինեն ապագայում ևս տեղական հայ աղագրականութեան հետ: Ապացոյց այդ բանի եղաւ այն հանգամանքը, որ նրանք ընդհանուր ցանկութեամբ ուղեցին յարգել հայ նշնեցանքներին, ընտրելով իրանցից Մաշադի Զամբար Բէլբալայ հաջի օղլուն և ուղարկեցին, որ նա առնէ

իր հետ տեղիս հայ քահանային և գնալ գերեզմանատուն հոգեհանգիստ կատարել տայ հանգուցեալների յիշատակին: Այդ վարժունքը այնքան քաղցր տպաւորութիւն թողեց տեղիս հայ հասարակութեան վրա, որ պարտք համարեցին հրապարակօրէն շնորհակալութիւն յայտնել նրանց և խնդրել մասնակցել հանգուցեալների պատին տրված սեղանին:

ՋԱՆՈՒԿ ԳԻՒՂԻՑ (Հին-Նախիջևանի գաւառ) մեզ գրում են. «Ջահիկի երկու խալխալ-ցի հայեր՝ մի տղամարդ է մի կին՝ Դէսրդ Պողոսեան և Մանդուխտ Միլոտուեան, ապրիլի 3-ին, կիրակի երեկոյան գնում են եղի Սալխալ գիւղը, որը չորս վերստ դէպի արեւելք է գտնվում Ջահիկից: Մութ ժամանակ պէտք է անցնէին Նախիջևանից: Յայտնի չէ՝ Գէորգը շաւկում է Սանդուխտին գետն անցնելու համար, թէ հէնց երկուսն էլ թխանցուկ մտնում են ջուրը. միայն իրողութիւնն այն է, որ երկուսով էլ դո՛հ են գնում գետի կատարի յորձանքներին և երեք օրից յետոյ նրանց դիակները գտնում են Սալխալից հեռու տեղում»:

ՇԻԿԱՆՈՂ գիւղից (Զանգեզուրի գաւառ) մեզ գրում են. «Կիրակի, մարտի 27-ին, Ճաւառէն ու Շիկանող գիւղերի արանքում գըրտնվող անտառի «Դրածո-ձառ» անուանված գիւղում տեղի ունեցաւ մի սրտաճմլիկ դէպք: Սրաշէն գիւղացի երկու խանութպաններ նոյն կիրակի առաւօտեան ձանապարհվում են մօտակայ հանքերը, որտեղ է պօստային բաժանմունքը, վերցնելով իրանց հետ մօտ 800 բուրձի: Շուշի փոխարքիւն: Դժբաղբաբար ձանապարհին անտառի ամենախուլ խորքում պատահում են մի քանի աւագակներ, որոնք յարձակվում են խեղճերի վրա, տեղում տեղը կապտում երկուսին միասին և ձանապարհից հեռացնելով, գաղանաբար սպանում են երկուսին էլ, թալանելով մինչև վերջին կօպէկը՝ անհետանում: Դիակները գտնվում են միայն երեք օրից յետոյ: Դիակները վրա գնդակի կամ դաշոյնի հարուածներ բոլորովին չը կային. երևում էր, որ քարով էին «Վարդուիւրը» արել»:

ԳՕՐԻՍԻՑ մեզ գրում են. «Դաւաղում տեղի ունեցաւ «պօր-օուլցի» (СКАРЛАТИНА) երկու դէպք մի տնից, հիւանդացողներ երկուսն էլ մեռան: Դրանք բոլոր և եղբայր էին: Այս դէպքերը նկատի առնելով և խօրհրայի վտանգը աչքի առաջ ունենալով անգամ այստեղ ոչ մի պատրաստութիւն չեն տեսնում հանգիւղու այդ հիւրերին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՁԸ

Ի՞նչ են կարծում Պետերբուրգում: Այդ վերնադուր «Matin» լրագրում տպված է Պետերբուրգի թղթակից Գաստօն Լէրուի հեռագիրը, որը, այն լուրերի առիթով, որ իբր թէ ծովային պատերազմ է սկսվել Րօժէսովէնսկու և Տօգօի Եսկադրաների մէջ, այցիւց ծովային շտաբը և խօսակցեց ծովապետ Նիդերմիլէրի հետ:

Ծովապետը թղթակցին յայտնեց իր համոզմունքը, որ հիմնված է Հեռաւոր Արեւելից և ծովապետ Րօժէսովէնսկուց ստացած տեղեկութիւնների վրա, որ այդ լուրերը ճշմարտանման չեն և որ ծովապետ Տօգօն հազիւ թէ այդքան հեռանաւ Եսկադրայի ափերից ծովային կռիւ համար:

Ապա պ. Լէրու ասեց, որ Եսկադրայի Կամրանեան ծովածոցում միալու պատճառն այն էր, որ Րօժէսովէնսկին սպասում էր Ներօգատիկ նաւախմբին: (Ноб.):

Գեներալ Կարօպաշկին «Königsberger Zeitung» հաղորդում է, որ գնեւալ Կուրօպատկին նորից խնդրեց, որ իրան յետ կանչեն պատերազմի բեմից: Պատճառը—տարածայնութիւնն է գլխաւոր հրամանատարի հետ: (Ноб.):

Թաւսեր Յիւդաուում: «Insb. Nachr.» լրագրում տպված է մասնաւոր նամակ, որի մէջ գտնվում են մի քանի տեղեկութիւններ Յիւդաուում բնակեցրած ռուս նաւաստիների մասին կեաջուստեան ծովախորշում ապաստանված նաւերի գլխաւորութիւնից՝ յետոյ: Այդ տեղեկութիւնները շատ միջթարական բնաւորութիւն չունեն: Յիւդաուում մօտ 1000 նաւաստիներ են գտնվում, որոնք չափազանց անկարգ կեանք են անցկացնում, հարբած երևալով փողոցներում և իրանց սանձարձակ

վարքով անուանարկելով եւրօպացիներէ ա-
նուան չինացիներէ աչքուս:

Գերմանական ոստիկանական բանտը ան-
դադար լինէ է կողպուածան և ծանր յան-
ցանքներէ համար պատիժ կըրող ուսանողներով:
Ոչ գերմանական իշխանութիւններէ համար,
ոչ էլ ուսու հրամանատարի համար գործերէ
այդ դրութիւնը հաճելի չէ, բայց անկարելի
է լինում խելքի բերել նրանց. դրա համար
ուսու զինուորը դարգացման շատ ստոր
աստի-
ճանի վրա է կանգնած:

Վերջին ժամանակները ստիպւած եղան
կանոն մտցնել, որի համաձայն օրական
միայն ինստուն մարդ իրաւունք ունեն ամի
գործու գալ:

«Հարկաւոր է, իսկապէս ասած,—նկատում
է թղթակիցը,—խղճալ այդ նաւասարներին,
որոնք չը գինովցած ժամանակ չափազանց
բարի և քաղաքավարի մարդիկ են: Որ նրանք
անասուններէ պէս հարբում են և ապա ան-
կարգութիւններ են անում, այդ բանի համար
պատասխանատուութիւնն ընկնում է նրանց
վրայ, ով թողնում է այդ խղճալի ժողովուրդին
կրթութեան այդպիսի ստոր աստիճանի վրայ»:
(Нов.):

Մովային տեղեկութիւններ. «Morning Post»
լրագրի թղթակիցը այն կարծիքն է յայտ-
նում, որ թշնամու ծովային ուժերի շարժման
մասին այժմ տարածվող տուտ լուրերը նպա-
տակ ունեն սխալ ճանապարհ ցոյց տալ
միմեանց:

Մովպետ Տօգօի պլանը նոյնպէս անթա-
փանցելի է, որպէս և առաջ: Պէտք է կարծել,
որ նա թող կը տայ ծովագետ Ռօժեստ-
վէնսկուս միանալ ծովագետ Նէբօգատովի
էսկադրայի հետ մի որ և է տեղում ձօնդ-
կօնդից դէպի հարաւ: Ռուսական էսկադրայի
հետ զբահակրի և մի քանի կրէյսէրներ
միանալը չեն թիթեակցնի նրա ճանապարհը:
Մի փոքր աւելի կամ պակաս անխառն
և փոխադրանաւորը նոյնպէս չեն փոխի
գործիւնը, որովհետև նրանց այսպէս թէ
այնպէս դանդաղեցնում են ծովագետի շար-
ժումը և զլիւսուր վտանգ են ներկայացնում
նրա համար:

Ենթադրական ակնանակները հեղտութեամբ
կարող են խառնակութիւն գցել այդ նաւերի
մէջ: Ենթադրվում է, որ ենթադրանքները
կը խուսափեն վճռական գործողութիւններից:
(Рус):

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Մարադա, ապրիլի 10-ին

Բազուի ցնցող լուրերը այստեղ ևս արձա-
գանք գտան: Մեզ հաղորդեցին, որ մինչև իսկ
նազուրից եկած ծպտաւթ թուրքեր են պտը-
նում Մարադայում և մտքեր պղտորում: Բնա-
կանաբար այստեղի հայ ազգաբնակչութիւնը
ա՛հ ու դողի և իրարանցման մէջ ընկաւ: Ա-
մենք մտքով անցնում էք, որ այստեղ էլ
Բազուի սարսափները կը կրկնվին: Երկիւղը
միայն ազգաբնակչութեան և ֆանատիկ ամ-
բոյնի կողմից էր, եթէ ոչ հայ ժողովուրդը,
ինչպէս Պարսկաստանի ամեն կողմերում,
վիճաբանային հաւատացած էր կառավարու-
թեան հայրախնամ պաշտպանութեան և վե-
րաբերմունքի վրա:

Բայց դեռ այդ լուր էր: Ամենքին և յատկա-
պէս պարսկաստանցիներին քաջ յայտնի է, որ
միանգամայն բացակայում են հզօր միջոցներ
ամբոխային շարժումներէ առաջն առնելու: Օրի-
նակ Ղժժի խնդրի և մեծ «բաւնի» ժամանակ
մենք թշնամու էինք և ակնաստես, թէ
ինչպէս ժողովուրդը մի քանի օր մայրաքա-
ղաքի աւերն էր ու հրամանատարը: Այստեղ
ամբոյնը մի սինլըր և սանիկլուտ թալապի
առաջնորդութեամբ, որի ձեռքում մի կոտորած
«ղաւ» կար, ասում են, ընկել էր ժա-
մանակի ընդհանուր սպարապետ և ներկայ
Շահի եղբայր Նայէթ-Սալթանի վրա և քնել
նրան մինչև պալատ: Երբ փախչող սպարա-
պետը իր զօրքերին կրակել էր հրամայել,
ստացել էր մերժում: Թէ «մենք մարգարէի
սերնդի վրա արձակել չենք կարող»:

Ամբոյնի տաննակ հազարաւորներէ մի այլ
բազմութիւն երբ յարձակվել էր Դար-Ալմա-
սիէի և Շամա-օլ Ալմաթի (պալատի անուն-
ները) վրա և պահպան զինուորներին կրկին
հրամայվել էր կրակել, դարձեալ բացասական
պատասխան էր ստացվել:

Արդ, երբ մայրաքաղաքում կառավարու-
թիւնը ձեռնարկ էր մնացել պաշտպանութիւ-
նից, ինչ ապացոյց, որ նոյն կառավարու-
թիւնը կարողանար մի իրական պաշտպա-
նութիւն ցոյց տալ այստեղ կամ այլուր, եթէ

Աստուած մի արասցէ, ամբոյնի վայրենի բը-
նազները գրգռվէին: Ուրախ ենք աւետու-
սակայն, որ բարեխնամ կառավարութիւնը
ամբոյնի գաղտնի համար, պէտք եղած հրա-
հանգները տուել էր ժողովուրդի պարագլուխ
հոգեւորականներին:

Բայց, ինչպէս յիշեցի, չը նայած այս միջո-
ցին, ժողովուրդը կրկին ա՛հ ու դողի մէջ էր,
մասնաւոր ուր մօհարէմի օրեր լինելով՝ պտը-
նող շշուկները ազգաբնակչութեան մէջ աւելի
անհանգիստ և երկիւղալի տրամադրութիւն
էին առաջ բերում: Ուստի խեղճ ժողովուրդը
դանակամորթ չը լինելու համար, զիմեց ինք-
նապաշտպանութեան: Շուտով շուկայից հա-
ւարձեցին հրացաններն ու զնդակները: Շնոր-
հիւ այն հանգամանքի, որ հայերը բացարձակ
զնուհիւն կատարեցին և շուկայում զնդակներ
չը թողեցին, թուրքերը առաւել ևս գրգռվե-
ցին, որով մի բուռ հայերի վախը աւելի
կրկնապատկեց:

Ինչ և է, ժողովուրդը մի քանի օր անցրեց
մահվան երկիւղով: Միանգամայն անսպասելի
կերպով աշուրայից մի օր առաջ մի յամա-
լուր ցնցեց հայերին, թէ վաղը գլուխ նկելու
օրը յարձակում է լինելու հայոց վրա: Լուրը
և հաւատարի էր և անհաւատարի: Եղան շա-
տերը, որ իրանց ինչը թագցրին: Գիշերով
մի խումբ երիտասարդներ ինչ-ինչ տեղեր այ-
ցելելուց և խորհուրդ անելուց յետոյ, որոշե-
ցին 3—5 հոգով որոշ տեղերում կանգնել
և պաշտպանել ժողովուրդին յարձակման դէպքում:
Որոշվել էր, եթէ ամբողջ յարձակվի և
բաւականանայ միայն աւարով, ցոյց չը տալ
ոչ մի դիմադրութիւն, իսկ եթէ անձի և կա-
նանց պատուի դէմ անարդ փորձ անվի, ի
նկատի չունենալով ոչ մի հանգամանք, ան-
պայման կրակել, թէկուզ ոչ մի հայ մնալու
չը լինի:

Բայց բարեխառնաբար աշուրն անցաւ ա-
ռանց երեւակայեալ անահնկալների և խաղաղ
յարաբերութիւնը երկու հարեան ազգերի մէջ
շարունակվում է ըստ առաջնոյն:

Ս. Տէր-Վարդանեան

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՑ
22 ապրիլի

ՏՕԿԻՕ. Ենթադրանքները լիապէս վարժի-
ցին ստորջրեայ մակոյնները կառավարելու—
«Standard»-ի ներկայացուցիչը խօսել է ծո-
վագետ Բրիշի հետ ծովային թնդանօթներ և
18,000 տոննանոց մարտանաւերի մասին: Մո-
վագետը կարծում է, որ այդպիսի մեծ նա-
ւերը տակտիքական մեծ սխալ կը լինէին: Իսկ
12 դիւանոց թնդանօթներ մասին նա կար-
ծիք յայտնեց, որ լիապէս պէտքական են:

ՎիէննԱ. Մարսային տարիքի քննութեան
ժամանակ առևտրի մինիստրը յայտնեց, որ
նոր տարիքը մի տեսակ զիջում է հակադիր
շահերին: Նա ցանկութիւն յայտնեց, որ ծրա-
դիրն ընդունվի առանց զանգաղելու: Չիւս
կրկնվեց յայտնում է, որ իր կուսակցու-
թիւնը պատրաստ է ձայն տալ այդ տարի-
քին, բայց դա չէ նշանակում, որ նա հրա-
ժարվում է քաղաքական կուրից:

ՌՈՒՍԱԳԵՏԻ. Կօշուրը յայտնեց, որ հաս-
ցել է մէջ յայտնված է դիմադիր դաշնակցու-
թեան ցանկութիւնը: Վերջինս կաշխատի վա-
նել ընտրութեան ժամանակ կուր հնացած ձևը:
ՍՏՕԿԶՕԼՄ. Ստորին պալատը մերժեց ընտ-
րողական բոլոր բեֆօրմները:

ՎիէննԱ. «Pol. Corr.»-ը ասում է, որ մի-
նիստրներին տեսակցութիւնը, թէև նոր ոչինչ
չարտադրեց, բայց բաւարար հետեւներ հա-
սաւ. երևաց, որ Աւստրիայի և Իտալիայի
յարաբերութիւններն անկեղծ են:

ԿՐԵՄԵՆՉՈՒԿ. Հաստատված է, որ եղել են
մի շարք դէպքեր ծոծրակի կոնսուլտուրայի
կամ ուղարկել. մի քանիսը եղել են մահացու:
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Բարձրագոյն հաստատված
են ապրիլի 16-ի մինիստրների խորհրդի և
Պետական խորհրդի ղեկավարամէնտների գը-
լիւսուրների որոշումները, որոնք վերաբերում
են Բարձրագոյն դպրոցների փակումից առա-
ջացած հարցերին: 1) դասաւանդութիւններն
ընդհատված հիմնարկութիւններում ընտրութեան
ներ չանել և բոլոր ուսանողներին թողնել
նոյն կուրսերում: 2) այդ դպրոցական հաս-
տատութիւններին կից եղած համայնական
հիմնարկութիւններն—ինչպէս համայնակցա-
րանները, ճաշարանները և այլն, փակել դա-
ստութեան ընդհատված ժամանակամիջոցին:

3) յիշված դպրոցներում աղտոտ սանիտրին
ընթացիկ կիսամեակի ուսման վճարից, իսկ
ստացվող վճարները կամ վերադարձնել կամ

հաշուել հետեւեալ տարվայ համար. 4) Որո-
շել, որ նախ բարձրագոյն դպրոցները, ո-
րոնցում աշնանը պարագլուխները չեն վեր-
սկսվել, կամ վերսկսվելուց յետոյ նորից այս
տարվայ նման դէպքեր տեղի կունենան, կը
փակվեն, ուսանողները և պրօֆէսորները բո-
լորն էլ կարձակվեն: 5) յանձնարարել դպրո-
ցական վարչութիւններին գլխաւորներին հոգ-
տանել, որ այս կիսամեակում պարագլուխ-
ներին ընդհատումը որքան կարելի է քիչ ազ-
դեցութիւն թողնէ ուսանողների գիտելիքների
պահպարի վրա: 6) միջոցներ մշակել, թէ ինչ-
պէս միջնակարգ դպրոցն աւարտողներին այս
տարի տեղ տալ համալսարաններում, կամ
վերջին կուրսերում գտնվողներին, ուր որ
հնարաւոր է, քննութիւններ նշանակել և ա-
ւարտման վկայականներ տալ:

ՄՕՍԿՎԱ, 22 ապրիլի: Հեռուոր Արեւելքից
զինուորական գնացքով ժամանեցին 90 զե-
րի զինուորներ և 4 օֆիցէր և ուղարկվեցին Մեդ-
վեդ գիւղը:

ՎԱՐՇԱՒԱ, 21 ապրիլի: Ապրիլի 18-ի
զոհերի յիշատակը յարգելու համար՝ ցուցա-
բարները փորձեցին կանգնեցնել գործարան-
ների աշխատանքները և քաղաքների ու
կառքերի շարժումը և դադարեցնել առևտուրը:
դա մասամբ աշողվեց, իսկ ընդհանրապէս
խաղաղ անցաւ:

ԲեՆԷՆ, 21 ապրիլի: Դերձակները և կար
անող կանայք գործադուլ արին, պահանջելով
վճարն աւելացնել և բանտարկան օրը մի
ժամով կարճացնել:

ԼՕԴՁ, 21 ապրիլի: Երեկոյեան ժամը 6-ին
չարածիւնները յարձակվեցին մի բանուկ փո-
ղոցում լրտեսական բաժնի ոստիկանական
վերահսկիչի որդու վրա և նրա գլխին մի
քանի վէրքեր հասցրին մի բուժ գործիքով:
Պատճառն այն է, որ նրաթղթում են, թէ նա
էլ լրտես է: Չարածիւնները անյայտացան:

ԲԱՒԱՆՇԻ, 21 ապրիլի: Պօզօստ գիւղում
500 հոգի գիւղացիներ յարձակվեցին Բարխա-
տիսկի իշխանների կալուածի վրա, կա-
ռավարից բռնի պահանջեցին իրանց տալ ա-
րտատեղիք:

ԲԱՅՈՒՄ, 21 ապրիլի: Բաթումում և Դու-
թայիսում կպցրած են զինեալ-հանապապե-
տի կոչերը, որոնցով հրաւիրում է ժողովուրդին
կարգ պահպանել և քաղաքական պրօպագան-
դային գիմարել:

ՊԱՐԻՑ, 22 ապրիլի: «Matin»-ը հաղորդում
է, որ Բօթստովնակու էսկադրան, Կամբա-
նեան ծոցից դուրս գալով, ապրիլի 17-ին
խաբիսխ նետեց Բինկանգ ծոցում, որը մի
քանի կրիւմէար հիւսիս է Կամբանեան ծոցից:
Ասում են, որ Մօտօնոն հրաւիրեց Դիւկասէի
ուղադրութիւնն այդ փառաւ լրա: Ֆրանսի-
կան կառավարութիւնը ենթադրական պաշտո-
նական ազգաբարոյթիւնից առաջ իմացել էր
այդ լուրը և իսկոյն հրամայել էր ծովագետ
Ժօնկէրին Սայգօնից մեկնել հակելու Ֆրան-
սիական չէզոքութեան վրա:—Քաղաքական
շրջաններում ենթադրում են, որ Կրէտէի պաշտ-
պան պետութիւններն ստիպված կը լինեն
զգալի կերպով զօրացնել իրանց զօրքերը կըդ-
րու վրա:

ԼՕՆԴՈՆ, 21 ապրիլի: Լոյս տեսած Կապոյտ
զըքում մակեդոնական հարցի առիթով առաջ
է բերված Պետերբուրգի բրիտանական հիւ-
պատոսի հաղորդագրութիւնը՝ յունական 7-ին
կուս Լամզդօրֆի հետ ունեցած խօսակցութեան
մասին: Լամզդօրֆն ասել է, որ ինքը բոլոր-
վին համաձայն է Լանսդօնի հետ Մակեդո-
նիայում կանոնաւոր ֆինանսական սխաւէմ
ներմուծելու և միջոցներ է ձեռք առել, որ
մասնաւորաց անէ այդ բանը և ուղադրութիւն
հրաւիրէ ֆինանսական բեֆօրմներ վրա: Նա
ցաւ է յայտնել, որ անցեալ տարի մեծ ու-
ղադրութեամբ չեն վերաբերվել գաւառների
հասարակական ծախքերի վրա՝ կոստրօլ նշա-
նակելու ծրագրին: Լամզդօրֆը կարծիք է
յայտնել նոյնպէս, որ իր ունեցած տեղեկու-
թիւններին նայելով, ինքը չէ կարծում, որ
գաւառները անկարգութիւնները վերսկսեն:

ՍԻՆԴԱՊՈՒՐ, 22 ապրիլի: Ներգաւառվել էս-
կադրան արագ անցկացաւ դէպի արեւելք:
Այստեղ ենթադրում են, որ նա կը մտնի Սայ-
գօն, որպէս զի ուստիք և ածուխ վերցնէ,
իսկ յետոյ կը միանայ Բօթստովնակու էս-
կադրայի հետ:

ՍԻՆԴԱՊՈՒՐ. Ռուսական III էսկադրան
անցկացաւ Սինգապուրի դիմացով և դիմեց
դէպի Չինական ծովը:

ՊԵՆԻՆՏ, 22 ապրիլի: Հօլանդական «Հալ-
լէվին» նաւը ընկատել է 7 նաւ բաց ծովում,
Սոււմատրայի մօտ:

ՄՕՍԿՎԱ, 22 ապրիլի: Տպտրանսատէ բերի
դաշնակցութիւնը մի կոչով դիմեց քաղաքին-

րին մայիսի 1-ը տօնելու և առհասարակ տօ-
նական հանգստութեան առիթով:

ԼՕՆԴՈՆ, 22 ապրիլի: Յունիսի 21-ին ծովը
կիջեցվի ենթադրական մի մեծ մարտանաւ ևս՝
«Կատօրի» անունով, 1000 (?) տօնն տարո-
ղութեամբ:

ՊԱՐԻՑ, 22 ապրիլի: Բաղաքական շրջան-
ներում յայտնում են, որ Լուքէի և անգլիա-
կան թագաւորի միջև յարաբերութիւնները
երբէք այնքան սրտագին չեն եղել, ինչպէս
այժմ:—Անգլիական 10 հակա-ականանաւեր
Գիբրալտարից մեկնում են Չինաստան բեր-
տանական էսկադրան ուժեղացնելու:

ԲԵՆԷՆՈՒ, 22 ապրիլի: Առաւօտեան ուկազ
հրատարակեց թագաւորի բարտուղար և հօր-
եղբորդի Նենադօվիչի հրաժարեցման մա-
սին: Նենադօվիչն անյապաղ մեկնեց արտա-
սահման:—Պօլսից եկած այն լուրը, որ իբր
թէ Պետր թագաւորն այցելելու է սուլթանին,
պաշտօնապէս հերքվում է:

23 ապրիլի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հեռուոր Արեւելքից ապրիլի
12-ին պաշտօնական տեղեկութիւններ չը
կան:—Ապրիլի 22-ին Յարկօէ-Սեբուս կա-
յացաւ զինուորական դպրոցի սանիտրի օֆիցէ-
րութեան աստիճան շնորհելու հանդէսը: Թա-
գաւոր Կայսրը բարեհաճեց դիմել ապագայ
օֆիցէրներին հետեւեալ խօսքերով. «Այս քաղ-
ղով պէտք է օֆիցերական ծառայութեան մեկն
սովորականք 4 ամիս առաջ: Իրա պատճառը
պատճառվում է և Հեռուոր Արեւելքում օֆի-
ցերների կրած ծանր կորուստները գործող բա-
նակում: Ես համոզված եմ, որ դուք ամեն ոյժ
ու ջանք գործ կը դնեք ազնաւար և անճա-
ղմութեամբ ծառայելու հայրենիքի և ինձ
այն զօրամասերում, ուր կը նշանակվի Ռու-
սաստանի համար ծանր այն ժամանակներում:
Անցեղօրեմ հետեւեցի իմ խաղաղին և հաստատ
հաւատացի Ասուծուն և Ռուսաստանի փառա-
ւոր ապագային: Յոյս դրեք ձեր ոյժերի վրա:
Վասնորքեամբ և յարգանքով վերաբերեցեք
ձեր գլխաւորներին: Հոգ քաղեք ձեր հպատակ
զինուորների վրա և արտով մեկ նրանց կարի-
ների մէջ. դա մեզ օգտակար կը լինի ձեր բո-
լոր ապագայ ծառայութեան մէջ: Լիակատար
աջողութիւն կը ցանկանում ձեզ ձեր առաջիկայ
ծառայութեան գործում և շնորհաւորում եմ,
պաւոններ, ձեր օֆիցերութիւնը»:

ԳՈՒՆԶՅՈՒՆ, 22 ապրիլի: Բանակներում
փոփոխութիւններ չը կան: Եղանակը քաղաք
է, փոփոխական, յաճախ ցուրտ:

ՀՈՒՄ: Կրէտէում բարոյութիւններ առաջ ե-
կած լինելու պատճառով, Տիտօսին այս ա-
ռաւօտ խորհրդակցութեան հրաւիրեց խնամա-
տար պետութիւնների ներկայացուցիչներին:—
Վաղը կը կայանայ Վիկտօր Հիւգօի արձանի
բացումը Վիլյու-դ'Օրգէլայում:

ԲԵՐԼԻՆ: Կոմս Տատնբախը կը յանձնէ
Մարօկօի սուլթանին, սովորական ընծաների
փոխարէն, Կարմիր արծաի շքանշանը, ազա-
մանդէ զարդարանքներով:

ՆԻՒՆՅՈՐԿ: Նիւ-Եօրկի նահանգի սենատն
ընդունեց այն առաջարկը, որով արվում է
Նիւգարայի շրջէֆի ուժերից շտապակա օգու-
վելու իրաւունքը մի մասնաւոր ընկերութեան:
ՊԱՐԻՑ: Մի քանի նահանգական ժողովներ
խնդրում են կառավարութեանը միջամտել
խաղաղութիւն կնքելու օգտին:—Ֆեյլի ֆրան-
սիական զեապալը պատասխան ստացաւ, որ
առաջարկված բեֆօրմները կընդունվին միայն
այն ժամանակ, երբ բոլոր շահագրգռված պե-
տութիւնները հաւանութիւն կը տան:

ԼՕՆԴՈՆ: Մովպետութիւնը յայտնում է
պաշտօնապէս, որ յունիսում նշանակված մեծ
մանեօվները յետաձգվում են, որովհետև այդ
ժամանակ կարող են խանգարել հանդիսանալ:
Այդ յայտարարութիւնը մեծ զարթոյն առա-
ճաւ: Ուսմը ասում են, որ յետաձգման
պատճառը ֆրանսիական էսկադրայի այցելու-
թիւնն է: Բայց հաւանօրէն դա մի նախա-
զգուշական միջոց է միջազգային բարդութիւն-
ների դէպքում:
ՄՕՑԻՆ: Կ. Պօլսի բոլորական ղեկավար-
տական գործակալը ապրիլի 21-ին Սաիդ
փաշայի հետ խօսակցութիւն ունեցաւ երկու
երկրների սահմանների վրա թիւրքական
թիւններից խուսափելու համար կազմված
խառը յանձնաժողովի աշխատանքները մասին:
Յանձնաժողովի առաջին նիստը, որ կազմված
էր բոլորական ներկայացուցիչ զինեալ Ան-
դրէից և Համդի փաշայից, կայացաւ մի և
նոյն օրը: Մտադրութիւն կայ պատային դաշ-
նակի կնքել Բօլգարայի և Թիւրքայի միջև:
ՄՕՍԿՎԱ: Շէյնի բնատրանում անձնասպան
կուս սերբերն IV հրացանաձիգ բաւալիօնի
պրապ

